ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.03.2013թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-17/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-17/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից 04.03.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-17/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացնում է բողոք՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով անցկացվող պարզեցված ընթացակարգի միջոցով 2012թ-ի ֆինանսական հաշվետվությունների տարեկան անկախ աուդիտորական ծառայության (գնման առարկա) ձեռքբերման նպատակով անցկացված մրցույթով ներկայացված երկու հայտերի գնահատման համար Պատվիրատուի գնահատման հանձնաժողովի ս.թ. փետրվարի 26-ին տեղի ունեցած նիստում գնահատման արդյունքների և հաղթող մասնակցի որոշման վերաբերյալ:

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն հայտնել է, որ նշված մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Մասնակից 1) և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից 2):

Բողոքաբեր ընկերությունը՝ Մասնակից 1, բողոքարկում է մասնավորապես գնահատման հանձնաժողովի հետևյալ գնահատումները ու դրանց արդյունքում ընդունված որոշումները և ներկայացնում է իր պահանջները.

1. «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 2. «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» կետում սահմանված է «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու կարգ Ա. և Բ. կետերով, իսկ դրանց հաջորդող պարագրաֆում ներկայացված է, թե որ ծառայությունների մատուցումն է համարվում նմանատիպ:

Ստացվում է, որ մրցույթով, «Մասնագիտական փորձառություն» չափանիշին բավարարելու համար Մասնակցին անհրաժեշտ է ներկայացնել՝

Ա. կետի պահանջը բավարարելու համար՝ հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) անտառային ֆոնդի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովման ոլորտում գործող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների մատուցման առնվազն երեք պայմանագիր, և

Բ. կետի պահանջը բավարարելու համար Ա. կետով պահանջվող պայմանագրերի պատճենները, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Մասնակից 2-ն իր հայտում ներկայացրել է ընկերությունների անվանումներ, որոնց իր կողմից մատուցվել են աուդիտորական ծառայություններ: Մասնակից 1-ի ներկայացուցիչը դիմել է գնահատող հանձնաժողովին հստակեցնելու և մատնանշելու համար, թե Մասնակից 2-ի հայտում ներկայացրած որ պայմանագրերն են համարվում նմանատիպ: Գնահատող հանձնաժողովի նախագահը պատասխանել է, որ Մասնակից 2-ը ներկայացրել է գնման առարկա հանդիսացող պայմանագրեր և դա բավարար է՝ հղում կատարելով «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» բաժին 2) կետին: Մասնակից 1-ի ներկայացուցիչը նշել է, որ այդ պատասխանը իրենց չի բավարարում, քանի որ իրենք այլ չափանիշի՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշին Մասնակից 2-ի բավարարման հարցն են վիճարկում: Ի վերջո գնահատման հանձնաժողովը որոշում է ընդունել, որ Մասնակից 2-ը բավարարում է «Մասնագիտական փորձառություն» չափանիշին:

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն բողոքարկում է գնահատման հանձնաժողովի այդ որոշումը և պահանջում, որպեսզի Մասնակից 2-ը ճանաչվի այդ չափանիշին չբավարարող, քանի որ իր հայտում չի ներկայացրել հրավերով պահանջվող տեղեկատվությունը և հիմքերը:

2. «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 2. «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» կետում սահմանված է «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը և դրա գնահատելու կարգ Ա. և Բ. կետերով, մեջբերվում է.

«Ա. աուդիտի խմբի ղեկավարը պետք է լինի աուդիտոր և պետք է ունենա առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, աշխատողները՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

Բ. առաջադրված աշխատակազմում ներգրավված աուդիտի խմբի ղեկավարը և աշխատողներից առնվազն երկուսը պետք է ունենան նմանատիպ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների մատուցման առնվազն երկու տարվա փորձ»:

Մասնակից 2-ը հայտում չի նշել, թե իր որ աշխատակիցներն են բավարարում վերոնշյալ չափանիշներին և Մասնակից 1-ի ներկայացուցիչը հարց է ուղղել գնահատման հանձնաժողովին՝ հստակեցնելու և մատնանշելու համար, թե Մասնակից 2-ի հայտում ներկայացրած որ և քանի աշխատակից են բավարարում մրցույթով սահմանված պահանջներին: Հանձնաժողովի քարտուղարը Մասնակից 2-ի հայտից ընթերցել է, թե որ աշխատակիցներն են գրավոր համաձայնություն տվել մասնակցելու տվյալ աուդիտին և նշել է, որ նրանք ներկայացրել են դիպլոմների, վկայականների և անձնագրերի պատճեններ, սակայն Ընկերության կրկնվող հարցին, թե որտեղից է երևում, որ Մասնակից 2-ի կողմից ներկայացված աուդիտի խմբի ղեկավարը և աշխատողներից առնվազն երկուսը իրականում ունեն նմանատիպ կազմակերպությունների՝ անտառային ֆոնդի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովման ոլորտում գործող կազմակերպությունների, ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների մատուցման առնվազն երկու տարվա փորձ, հանձնաժողովը այդպես էլ չի պատասխանել, բայց մրցույթի գնահատման արդյունքները հայտարարելիս համարել է, որ Մասնակից 2-ը բավարարում է այս չափանիշին: Հետևաբար, «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն բողոքարկում է գնահատման հանձնաժողովի այդ որոշումը և պահանջում, որպեսզի Մասնակից 2-ը ճանաչվի «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշին

…զարարող, քանի որ իր հայտում չի ներկայացրել պահանջվող տեղեկատվությունը և դրա հիմքերը:

3. «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով մրցույթի հրավերի ՄԱՍ 2-ի 4. «Հայտի գնային առաջարկը» կետում նշված է՝ մեջբերում.

«4.1 Առաջարկվող գինը ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով»:

Մասնակից 1-ը մրցույթի հայտով ներկայացրել է իր գնային առաջարկը 4.750.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, իսկ Մասնակից 2-ը՝ 1.250.000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:

Գնային առաջարկների այդքան մեծ տարբերության հետ կապված գնահատման հանձնաժողովի անդամները հարց են ուղղել Մասնակից 2-ին փորձելով հստակեցնել, թե արդյոք նրանք իրենց գնային առաջարկը պատրաստելիս հաշվի են առել Հայանտառ ՊՈԱԿ-ի Հայաստանի ողջ տարածքում տեղակայված 20 մասնաճյուղեր ունենալու հանգամանքը և որ անհրաժեշտություն է առաջանալու այցելություններ կազմակերպել: Ի պատասխան, Մասնակից 2-ի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակավորված աուդիտոր Ա. Զուրաբյանը նշել է, որ նման գնային առաջարկ անելով իրենց կազմակերպությունը դեմպինգ է իրականացնում, որպեսզի կարողանա պայմանագիր կնքել Պատվիրատուի հետ, իսկ հետագա տարիներին իրենք անշուշտ այլ գին կառաջարկեն: Նա ավելացրել է, որ իրենց կազմակերպությունն ունենալով այլ հաճախորդներ կարող է իրեն թույլ տալ ծածկել այս պատվերից առաջացող վնասը:

Մասնակից 1-ի ներկայացուցիչը գնահատման հանձնաժողովին առաջարկել է իր արձանագրության մեջ ներառել և տրված հարցը և Մասնակից 2-ի կողմից տրված պատասխանը, քանի որ նման բացատրությունը Մասնակից 1-ի կարծիքով հակամրցակցային քայլ է և պետք է հաշվի առնվի գնահատող հանձնաժողովի կողմից մրցույթի արդյունքների համապատասխանությունը գնահատելիս: Հանձնաժողովի քարտուղարը նշել է, որ Մասնակից 1-ի պահանջը բավարարելու հիմքեր չկան, քանի որ արձանագրության ձևաչափում նման բան նախատեսված չէ:

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն գտնում է, որ Մասնակից 2-ի գնային առաջարկը իրատեսական չէ, հակամրցակցային է և հակասում է տվյալ մրցույթի հրավերի պահանջներին այն մասով, որ չէր կարող լինել ինքնարժեքից պակաս, բայց Մասնակից 2-ի կողմից շեշտվում է, որ իրենք այս մրցույթի դեմպինգ են իրականացնում, ինչպես նաև այն առումով, որ Մասնակից 2-ը իր հայտով Պատվիրատուին կեղծ գնային առաջարկ է

...արել: Մասնակից 1-ը հարկ է համարում ևս մեկ անգամ շեշտել, որ Մասնակից 2-ի ներկայացուցիչը ՀՀ ֆինանսների նախարարության որակավորված աուդիտոր է և նրա վրա տարածվում է ՀՀ կառավարության 20.05.2005թ. N 499 որոշմամբ հաստատված Աուդիտորի վարքագծի կանոնները, մասնավորապես ե) կետը, ըստ որի, աուդիտորը պարտավոր է զերծ մնալ այնպիսի գործողություններից (կամ անգործությունից), որոնք կարող են վարկաբեկել և հեղինակազրկել նրան: Այսինքն, նրա դեմպինգի մասին հայտարարությունները պետք է համարվեն որպես իրականությանը համապատասխանող:

Բողոքաբեր կազմակերպությունը գտնում է, որ Մասնակից 2-ի դեմպինգային քայլը և գնման հանձնաժողովի որոշումը մրցույթի արդյունքների վերաբերյալ հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքներին:

Վերոնշյալից ելնելով «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն պահանջել է, որ.

1. բողոքի 1-ին կետի մասով Մասնակից 2-ը ճանաչվի այդ չափանիշին չբավարարող և հաղթող ճանաչվի «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն և վերջինիս հետ կնքվի մրցույթով ծառայության մատուցման պայմանագիր:

2. բողոքի 2-րդ կետի մասով Մասնակից 2-ը ճանաչվի «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշին չբավարարող և հաղթող ճանաչվի «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն և վերջինիս հետ կնքվի մրցույթով ծառայության մատուցման պայմանագիր:

3. բողոքի 3-րդ կետի մասով Մասնակից 2-ը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բ. ենթակետով նախատեսված հիմքով, ինչպես նաև 3-րդ հոդվածի սկզբունքները խախտելու համար, դիտարկել Մասնակից 2-ին պետական գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցության իրավունքից զրկելու հարցը:

2. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 07.09.2013թ. N 09/032-417 գրությամբ դիմել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 04.03.2013թ. «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ը 13.03.2013թ. N 01-10/72 գրությամբ «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի պարզեցված ընթացակարգի ձևով ստեղծված «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովը ս.թ փետրվարի 13-ի թիվ 2 որոշմամբ հաստատել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2012թ. ֆինանսական հաշվետվությունների տարեկան անկախ աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով պարզեցված ընթացակարգի հրավերը:

Հրավերը սահմանված կարգով հրապարակվել է ՀՀ ֆինանսների նախարարության «gnumner.am» կայքում:

Մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Մասնակից 1) և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից 2):

Գնահատման հանձնաժողովի ս.թ փետրվարի 26-ին տեղի ունեցած նիստում, որին բացի հանձնաժողովի անդամներից ներկա են գտնվել նաև Մասնակից 1-ի տնօրեն Տիգրան Ռաշոյանը և երկու աշխատակիցներ և Մասնակից 2-ի լիազորված անձ Արշավիր Զուրաբյանը, հանձնաժողովի միաձայն որոշմամբ հաղթող է ճանաչվել Մասնակից 2-ը: Վերջինիս գնային առաջարկը եղել է 1.500.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ Մասնակից 1-ի գնային առաջարկը եղել է 5.700.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Մասնակից 1-ը բողոքարկել է գնահատման հանձնաժողովի որոշումը երեք կետերով:

1. Մասնակից 1-ը գտնում է, որ Մասնակից 2-ը չի համապատասխանում «Մասնագիտական փորձառություն» չափանիշին և դա անտեսվել է հանձնաժողովի կողմից:

Գնահատող հանձնաժողովի նիստում պարզաբանվել է Մասնակից 1-ին, որ հրավերի «Մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը» բաժին 2) կետով նշված է, որ «Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր»:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ը նշել է, որ գնման առարկան՝ Աուդիտորական ծառայության ձեռքբերումն է: Հանձնաժողովի կարծիքով կամ համանման /նմանատիպ/ ծառայությունը լավագույն դեպքում կարող էր որոշ չափով գերադասելի լինել միայն այլ հավասար պայմանների, տվյալ դեպքում հավասար գնային առաջարկի դեպքում:

Ըստ ներկայացված փաստաթղթերի Մասնակից 2-ը «հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է գնման

արկա հանդիսացող՝ Աուդիտորական ծառայությունների մատուցման գործարքներ, ինչը հստակ ամրագրված է հրավերով: Բողոքող՝ Մասնակից 1-ի վկայակոչած «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու բաժնի Ա և Բ բաժիններում՝ նախկինում կատարված պայմանագիրը /կամ պայմանագրերը/ գնահատվում է /կամ գնահատվում են/ նմանատիպ, եթե դրա /դրանց/ շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը /կամ հանրագումարային ծավալը/ գումարային արտահայտությամբ պակաս չէ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ը նշել է, որ հաշվապահական հաշվառումը անտառային տնտեսությունում առանձահատուկ ստանդարտներով չի վարվում, որպեսզի նման ոլորտում Աուդիտի մասնագիտական փորձ ունեցող մասնակցին գնահատող հանձնաժողովի կողմից նման գնային առաջարկի՝ ավելի քան 3,8 անգամ տարբերության պայմաններում տրվեր հատուկ առավելություն: Դա նախատեսված չէ նաև հրավերով:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ը գտնում է, որ Մասնակից 1-ի պահանջն այդ մասով անհիմն է:

Զուտ համանման /նմանատիպ/ նախկինում կատարված պայմանագրերը առավելություն կարող էին տալ Մասնակից 1-ին միևնույն հավասար գնային առաջարկի դեպքում, սակայն ինչպես հայտնի է Մասնակից 1-ի գնային առաջարկը 3,8 անգամ ավել է Մասնակից 2-ի գնային առաջարկից:

2. Հանձնաժողովի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշով Մասնակից 2-ը գնահատվել է բավարար, քանի որ նրա կողմից ներկայացվել են հրավերում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Մասնակից 1-ի աշխատանքային ռեսուրսների զուտ անտառային ոլորտում աշխատանքային փորձառությունը հանձնաժողովի կողմից կարող էր դիտվել որպես առավելություն նորից միայն հավասար գնային առաջարկի դեպքում:

3. Գնահատող հանձնաժողովը գնային առաջարկը գնահատելիս գնահատել է մասնակիցների կողմից հայտում գրավոր ներկայացված, կնքված գնի առաջարկը՝ դրան կից գնագոյացման հաշվարկով: Մասնակից 2-ի կողմից ներկայացված գնագոյացման հաշվարկը հետևյալն է՝ խմբի ղեկավար 300.000դր, աուդիտորներ 500.000 դր., սոց. հարկեր 240.000

վարչական ծախսեր 85.000, շահույթ 125.000դր, ԱԱՀ 250.000դր, ընդամենը 1.500.000 դր: Ակնհայտ է, որ դեմպինգի մասին խոսք չկա:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ կոնկրետ ներկայացված հայտի գնային առաջարկի վերաբերյալ դեմպինգի մասին խոսակցություն չի եղել և չէր կարող լինել, քանի որ առկա էր գնագոյացման հաշվարկը: Դեմպինգի մասին խոսքը բացվել է Մասնակից 2-ին ուղղված հանձնաժողովի անդամի այն հարցից հետո, թե «ինչով կբացատրեք Ձեր կողմից իրականացված միևնույն կազմակերպությունում նախկին պայմանագրերի գների միջև ըստ տարիների եղած մեծ տարբերությունը», որին «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի լիազորված անձ Արշավիր Զուրաբյանը պատասխանել է, որ շատ հնարավոր է, որ դրանք սկզբում դեմպինգով են ներկայացրել, չպատկերացնելով աշխատանքների իրական ծավալները, իսկ հետագա տարիներին ուղղակի կատարել են ճշգրտումներ: Նման պատասխանից հետո հանձնաժողովի նախագահի կողմից հարց է տրվել թե, նրանք ներկայումս գնի առաջարկը ներկայացնելիս պատկերացնում են կատարվող աշխատանքների ծավալները՝ ավելի քան 20 մասնաճյուղերի առկայությունը: Վերջինս պատասխանել է, որ պատկերացնում են և գնի առաջարկը ներկայացնելիս հաշվի են առել:

Հանձնաժողովի խնդիրը չէր և նա չի գնահատել թե մասնակիցները ինչ կարգով են ձեռք բերել հայտով իրենց ներկայացրած նախկին Աուդիտորական ծառայության պայմանագրերը, (մրցույթով են հաղթել, թե եղել են ուղղակի կնքված պայմանագրեր), ուստի չէր կարող եզրակացնել թե նախկին պայմանագրերը դեմպինգով են եղել թե ՝ շահույթով:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ը նշել է, որ նշված մրցույթի գնահատող հանձնաժողովի լիազորությունների մեջ չէր մտնում գնահատել Մասնակից 2-ի կողմից նախկինում արդեն իսկ կատարված աշխատանքները՝ դրանք շահույթով են եղել, թե վնասով: Մյուս կողմից հանձնաժողովի քննարկման առարկա չէր կարող դարձնել նիստին ներկա մասնակիցներից և ոչ մեկի նոր գնային առաջարկը, կամ որ նույնն է գնի մասին նոր կարծիքները, ինչը ուղղակի բխում է Մասնակից 1-ի բողոքի տրամաբանությունից:

Հանձնաժողովը Մասնակից 1-ի գնի հայտը գնահատել է հատկապես անբավարար, քանի որ այն գերազանցել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 2013թ. եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված 5.000.000 դրամը /ավելի քան 14 տոկոսով/:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքը և նրա գործունեությունը չի հակասել «սահմանված գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպված սկզբունքներին»:

Ընդհակառակը, հանձնաժողովի աշխատանքները ոչ միայն խտրական, այլ նաև կոռուպցիոն կարող էին դիտվել, եթե նման գնային առաջարկների տարբերության պայմաններում առավելություն տրվեր Մասնակից 1-ին: Այդ դեպքում դժվար թե հանձնաժողովը որևէ տրամաբանական բացատրություն կարողանար տալ իր արդեն տվյալ դեպքում իրոք կողմնակալ որոշման վերաբերյալ՝ Մասնակից 2-ի շատ հավանական և հիմնավոր բողոքի դեպքում: Դեռ ավելին, հանձնաժողովի որոշումը այն դեպքում խտրական կլիներ, եթե հաշվի չառնվեր առաջարկված 3.8 անգամ թանկ գնային տարբերությունը և նորից պայմանագիր կնքվեր Մասնակից 1-ի հետ: Գնահատող հանձնաժողովի անաչառ աշխատանքի շնորհիվ տնտեսվել է այս ծառայության գնման համար նախահաշվով նախատեսված ավելի քան 3.500.000 դրամ:

Գնահատող հանձնաժողովը աշխատել է ավելի քան հրապարակային և թափանցիկ, դրա ապացույցն է նաև այն փաստը, որ առանց լիազորագրի գնահատող հանձնաժողովի երկու նիստերին անարգել թույլ է տրվել մասնակցել Մասնակից 1-ի երկու այլ աշխատողներին:

3. ԳԲԽ-17/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից 04.03.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել:

4. ԳԲԽ-17/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-17/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից 04.03.2013թ. ներկայացված բողոքը, «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 26.02.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությունը, «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև

...ավիրատու) Կենտրոնին հասցեագրված 13.03.2013թ. N 01-10/72 գրությունը և կից փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների տարեկան անկախ աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 26.02.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ հանձնաժողովի անդամները դրական և համապատասխանող են գնահատել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները:

Գնային առաջարկով նախապատվությունը տրվել է «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ին և վերջինս ճանաչվել է հաղթող:

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի գնային առաջարկը գնահատվել է անբավարար, քանի որ գերազանցել է նախատեսված գինը:

1. «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների տարեկան անկախ աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի Հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը բավարարելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ)՝ անտառային ֆոնդի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովման ոլորտում գործող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների մատուցման առնվազն երեք պայմանագիր, նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն բողոքարկել է գնահատող հանձնաժողովի այդ որոշումը և պահանջել է, «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ին գնահատել որպես «Մասնագիտական

գործառություն» չափանիշին չբավարարող մասնակից, քանի որ վերջինս իր հայտում չի ներկայացրել հրավերով պահանջվող տեղեկատվությունը և հիմքերը:

Պատվիրատուն Կենտրոնին ներկայացված 13.03.2013թ. N 01-10/72 գրությամբ հայտնել է, որ Հանձնաժողովի նիստում պարզաբանվել է Մասնակից 1-ին, որ հրավերի «Մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը» բաժին 2) կետով նշված է, որ «Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր»: Ըստ ներկայացված փաստաթղթերի, «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող՝ Աուդիտորական ծառայությունների մատուցման գործարքներ, ինչը հստակ ամրագրված է հրավերով: Պատվիրատուն հայտնել է, որ տվյալ դեպքում գնման առարկան՝ Աուդիտորական ծառայության ձեռքբերումն է: Հանձնաժողովի կարծիքով համանման /նմանատիպ/ ծառայությունը լավագույն դեպքում կարող էր որոշ չափով գերադասելի լինել միայն այլ հավասար պայմանների, տվյալ դեպքում հավասար գնային առաջարկի դեպքում:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ը հայտնել է նաև, որ բողոքաբեր կազմակերպության վկայակոչած Հրավերի 1 մասի 2.3 կետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու Ա և Բ բաժիններում՝ նախկինում կատարված պայմանագիրը /կամ պայմանագրերը/ գնահատվում է /կամ գնահատվում են/ նմանատիպ, եթե դրա /դրանց/ շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը /կամ հանրագումարային ծավալը/ գումարային արտահայտությամբ պակաս չէ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ուստի «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի պահանջը այդ մասով անհիմն է:

- **1-ին կետի վերաբերյալ.**

«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի հավելված N 3.1-ով, ներկայացրել է Մասնագիտական գործունեության՝ պայմանագրով նախատեսված գործունեության համապատասխանության նախկինում կատարված պայմանագրերի մասին

...ղեկանք, որտեղ նշված է, որ 2012 թվականի ընթացքում «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն իրականացրել է՝ «Էլենքս» ՍՊԸ-ի հետ (ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 35/ 010-23-24-45) 960.000 ՀՀ դրամ արժեքով, «Հայգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճ. 43/ 010-54-78-38) 960.000 ՀՀ դրամ արժեքով, «Էքթաք Սերվիս» ՍՊԸ-ի (ՀԷԿ) հետ (ՀՀ ք. Երևան, Արարատյան 1գ. 18/5/ 010-54-18-54) 960.000 ՀՀ դրամ արժեքով և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ ք. Երևան, Արին Բերդի 3, նրբ. 3/ 010-47-26-51) 4.500.000 ՀՀ դրամ արժեքով, 2011 թվականի ընթացքում «Հայգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճ. 43/ 010-54-78-38) 960.000 ՀՀ դրամ արժեքով, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ ք. Երևան, Արին Բերդի 3, նրբ. 3/ 010-47-26-51) 9.600.000 ՀՀ դրամ արժեքով, «Սյունիք» ԲՀԿ-ի (Սիսիանի ՀԷԿ) հետ (ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ. Ռինդ, Մոմիկի 5) 650.000 ՀՀ դրամ արժեքով և 2010 թվականին «Արմաէք» ՓԲԸ-ի հետ (ՀՀ ք. Երևան, Վաղարշյան 8/1) 600.000 ՀՀ դրամ արժեքով, «Արմաէք Ուինդ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ ք. Երևան, Վաղարշյան 8/1) 200.000 ՀՀ դրամ արժեքով, «Էլեկտրոէներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ ք. Երևան, Մյասնիկյան 5/1) 960.000 ՀՀ դրամ արժեքով և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ ք. Երևան, Արին Բերդի 3, նրբ. 3/ 010-47-26-51) 3.200.000 ՀՀ դրամ արժեքով աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրեր:

«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի հավելված N 3.2-ով ներկայացրել է Մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, որով «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմել է 4.500.000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հետ 20.02.2012թ. կնքված N ԵՋԷԿ-ՊԸԾՁԲ 02/11 ծածկագրով՝ 4.500.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով պայմանագրի և «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի միջև 10.07.2012թ կնքված հանձնման-ընդունման արձանագրության պատճենները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը և մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 80-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրերի առարկայի, ծավալի՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալների մասին տեղեկությունները:

2. Մասնակիցը համարվում է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Կարգի 81-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2. առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3. Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 85-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել է, որ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

• Նախկինում կատարված պայմանագրերի առարկան, ծավալը՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները:

2. Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում անտառային ֆոնդի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովման ոլորտում գործող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների մատուցումը:

Հրավերի 1-ին մասի 2.3 ենթակետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն երեք պայմանագիր:

բ. նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Նմանատիպ են համարվում անտառային ֆոնդի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովման ոլորտում գործող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների մատուցումը:

Հրավերի 2-րդ մասի՝ «Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու» Հրահանգի 2.2.3 կետով սահմանվել է, որ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Գտնում ենք, որ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Հրավերի հավելված N 3.1-ը հանդիսացող «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեության» չափանիշի մասին տեղեկանքը համապատասխանում է Կարգի 80-րդ կետով և Հրավերի 2.3 ենթակետով սահմանված պահանջներին:

Ինչ վերաբերում է «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Հրավերի հավելված N 3.2-ը հանդիսացող «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասին հայտարարությանը և դրան կից ներկայացված փաստաթղթերին, ապա գտնում ենք, որ տվյալ չափանիշի մասով «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը համապատասխանում է Կարգի 81-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, քանի որ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասին հայտարարությանը կից ներկայացվել է «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի միջև 20.02.2012թ. կնքված N ԵՋԷԿ-ՊԸԾՁԲ 02/11 ծածկագրով՝ 4.500.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով պայմանագրի, ինչպես նաև նշված պայմանագրով նախատեսված ծառայությունների պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող 10.07.2012թ կնքված

համանման-ընդունման արձանագրության պատճենները, թեև Հրավերի 2.3 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն երեք պայմանագիր:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

2. Բողոքաբեր ընկերությունը բողոքով հայտնել է, որ «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված՝ աուդիտի խմբի ղեկավարը պետք է լինի աուդիտոր և պետք է ունենա առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, աշխատողները՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, ինչպես նաև առաջադրված աշխատակազմում ներգրավված աուդիտի խմբի ղեկավարը և աշխատողներից առնվազն երկուսը պետք է ունենան նմանատիպ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների մատուցման առնվազն երկու տարվա փորձ, սակայն «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն հայտում չի նշել, թե իր որ աշխատակիցներն են բավարարում վերը նշված չափանիշներին: Գնահատման արդյունքները հայտարարելիս որոշվել է, որ Մասնակից 2-ը բավարարում է «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշին:

Բողոքաբեր ընկերությունը բողոքարկել է գնահատման հանձնաժողովի այս որոշումը և պահանջել է, որպեսզի «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն ճանաչվի «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշին չբավարարող, քանի որ իր հայտում չի ներկայացրել պահանջվող տեղեկատվությունը և դրա հիմքերը:

Պատվիրատուն Կենտրոնին ներկայացված 13.03.2013թ. N 01-10/72 գրությամբ հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշով «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն գնահատվել է բավարար, քանի որ նրա կողմից ներկայացվել են հրավերում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

- **2-րդ կետի վերաբերյալ.**

«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի N 3.4 հավելվածով ներկայացրել է աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարություն, որով հավաստել է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն Ընթացակարգի Հրավերի N 5.3 հավելվածով՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքով, ներկայացրել է թվով 3 մասնագետների՝ Գոռ Դավթյանի (որակավորումը՝ աուդիտոր, աշխատանքային փորձը՝ ժամանակահատվածը՝ 20 տարի, գործունեության ոլորտը՝ աուդիտ խորհրդատվություն, գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ, 010-544-788) Գայանե Թովմասյանի (որակավորումը՝ աուդիտոր, աշխատանքային փորձը՝ ժամանակահատվածը՝ 20 տարի, գործունեության ոլորտը՝ աուդիտ խորհրդատվություն, գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ, 010-544-788) և Արշավիր Զուրաբյանի (որակավորումը՝ աուդիտոր, աշխատանքային փորձը՝ ժամանակահատվածը՝ 20 տարի, գործունեության ոլորտը՝ աուդիտ խորհրդատվություն, գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ, 010-544-788) վերաբերյալ տվյալները՝ կից ներկայացնելով վերջիններիս՝ մատուցվելիք ծառայություններում ներգրավելու համար գրավոր համաձայնությունները, անձնագրերի ու դիպլոմների պատճենները, և աուդիտորի որակավորման համապատասխանաբար 09.09.2008թ. Գոռ Դավթյանին տրված N 026, 19.03.2009թ. Գայանե Թովմասյանին տրված N 078 և 01.10.2009թ. Արշավիր Զուրաբյանին տրված N 091 վկայականները:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Կարգի 84-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները.

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

Հրավերի 1-ին մասի 2.3 ենթակետով սահմանվել է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները:

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգարվվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝

ա. աուդիտի խմբի ղեկավարը պետք է լինի աուդիտոր և պետք է ունենա առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, աշխատողները՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

բ. առաջադրված աշխատակազմում ներգրավված աուդիտի խմբի ղեկավարը և աշխատողներից առնվազն երկուսը պետք է ունենան նմանատիպ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների մատուցման առնվազն երկու տարվա փորձ:

Գտնում ենք, որ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Հրավերի N 3.1 հավելվածը հանդիսացող «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեության» չափանիշի մասին տեղեկանքը ներկայացվել է Կարգի 80-րդ կետով և Հրավերի 2.3 ենթակետով սահմանված պահանջների պահպանմամբ:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

3. Բողոքաբեր ընկերությունը հայտնել է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների տարեկան անկախ աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ), մասնակցելու նպատակով «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 4.750.000 դրամ (առանց ԱԱՀ-ի), «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 1.250.000 դրամ (առանց ԱԱՀ-ի):

Ընկերությունը հայտնել է, որ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի գնային առաջարկը իրատեսական չէ, հակամրցակցային է և հակասում է տվյալ մրցույթի հրավերի պահանջներին, քանի որ եղել է ինքնարժեքից պակաս, ինչի կապակցությամբ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն հայտնել է, որ իրենք դեմպինգ են իրականացրել, ինչպես նաև վերջիններիս կողմից ներկայացվել է կեղծ գնային առաջարկ:

Պատվիրատուն Կենտրոնին ներկայացված 13.03.2013թ. N 01-10/72 գրությամբ հայտնել է, որ կոնկրետ ներկայացված հայտի գնային առաջարկի վերաբերյալ դեմպինգի մասին խոսակցություն չի եղել և չէր կարող լինել, քանի որ առկա էր գնագոյացման հաշվարկը: Հանձնաժողովի այն հարցին, թե ինչով է բացատրվում «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից իրականացված միևնույն կազմակերպությունում նախկին պայմանագրերի գների միջև ըստ տարիների եղած մեծ տարբերությունը և ներկայումս գնի առաջարկը

ներկայացնելիս պատկերացնում են արդյո՞ք կատարվող աշխատանքների ծավալները՝ ավելի քան 20 մասնաճյուղերի առկայությունը, «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի լիազորված անձը պատասխանել է, որ շատ հնարավոր է, որ դրանք սկզբում դեմպինգով են ներկայացվել, չպատկերացնելով աշխատանքների իրական ծավալները, իսկ հետագա տարիներին ուղղակի կատարվել են ճշգրտումներ և, որ գնի առաջարկը ներկայացնելիս հաշվի են առել կատարվող աշխատանքների ծավալները:

Հանձնաժողովը «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՍՊԸ-ի գնի հայտը գնահատել է հատկապես անբավարար, քանի որ այն գերազանցել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 2013թ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված 5.000.000 դրամը:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովը չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքը և նրա գործունեությունը չի հակասել «սահմանված գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպված սկզբունքներին»: Ընդհակառակն, հանձնաժողովի աշխատանքները ոչ միայն խտրական, այլ նաև կոռուպցիոն կարող էր դիտվել, եթե նման գնային առաջարկների տարբերության պայմաններում առավելություն տրվեր Մասնակից 1-ին: Հանձնաժողովի որոշումը այն դեպքում խտրական կլիներ, եթե հաշվի չառնվեր առաջարկված 3.8 անգամ թանկ գնային տարբերությունը և նորից պայմանագիր կնքվեր Մասնակից 1-ի հետ: Ուստի գնահատող հանձնաժողովի անաչառ աշխատանքի շնորհիվ տնտեսվել է այս ծառայության գնման համար նախահաշվով նախատեսված ավելի քան 3.500.000 դրամ:

- **3-րդ կետի վերաբերյալ.**

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 111-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ընթացակարգի հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Հրավերի 1-ին մասի 7.2.4 կետով սահմանված՝ ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից տվյալ Ընթացակարգի համար ներկայացրած գնային առաջարկը կազմել է 5.700.000 դրամ:

«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից տվյալ Ընթացակարգի համար ներկայացրած գնային առաջարկը գնման առարկայի համար կազմել է 1.500.000 դրամ:

Այսինքն, տվյալ դեպքում ներկայացված գնային առաջարկներից «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը եղել է նվազագույն գնային առաջարկը և գնային առաջարկին կից ներկայացրվել է գնագոյացման հաշվարկ, ըստ որի նախատեսվել են՝ խմբի ղեկավար՝ 300.000 դրամ, աուդիտորներ՝ 500.000 դրամ, սոցիալական հարկեր՝ 240.000 դրամ, վարչական ծախսեր 85.000 դրամ, ինչի արդյունքում ինքնարժեքը կազմել է ընդամենը 1.125.000 դրամ, շահույթ 125.000 դրամ, ԱԱՀ 250.000 դրամ, ընդամենը 1.500.000 դրամ:

Պատվիրատուն դիրքորոշմանը կից ներկայացրել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 2013թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշիվը, ըստ որի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ ծառայության համար նախատեսվել է 5.000.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից ներկայացված այն հիմնավորմանը, թե Հանձնաժողովի կարծիքով կամ համանման /նմանատիպ/ ծառայությունը լավագույն դեպքում կարող էր որոշ չափով գերադասելի լինել միայն այլ հավասար պայմանների, տվյալ դեպքում հավասար գնային առաջարկի դեպքում անհիմն է, քանի որ Հրավերով՝ ընթացակարգի մասնակիցների կողմից հավասար գնային առաջարկ ներկայացնելու դեպքում, մասնակիցներին ոչ գնային պայմաններով գնահատելու կարգ սահմանված չէ:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն ներկայացված բողոքով պահանջել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բ. ենթակետով նախատեսված հիմքով, ինչպես նաև 3-րդ հոդվածի սկզբունքները խախտելու համար «Աուդիտ սերվիս» ՍՊԸ-ին դիտարկել պետական գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցության իրավունքից զրկելու հարցը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված ցուցակը հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում և տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո, գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն

հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ և անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով՝ ելնելով նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված պայմանների խախտման ծանրությունից:

Այսպիսով, գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից 04.03.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գայանե Գասպարյան

Անդամ՝ Հովհաննես Սերայդարյան